

Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով
 ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	Հեղուկ քրոմատոգրաֆ՝ մասս-սպեկտրոմետրի հետ համակցված
Գիտական կազմակերպություն	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Համաֆինանսավորող կազմակերպություն	-
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	60000.0 հազար (վաթսու միլիոն) ՀՀ դրամ
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	29951.76 հազար (քսանինը միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար յոթ հարյուր վաթսու) ՀՀ դրամ
Շահագրգիռ կազմակերպություններ	-
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Սարքի կիրառման ոլորտը ներառում է նեյրոգիտության, մասնավորապես՝ աուտիզմի, Ալցհեյմերի հիվանդության և կաթվածի ոլորտում իրականացվող հետազոտական աշխատանքները: Նախատեսվում է փորձարարական աուտիզմի, Ալցհեյմերի հիվանդության և կաթվածի պայմաններում ուղեղի տարբեր կառույցներում, արյան պլազմայում, ուղեղ-ողնուղեղային հեղուկում որոշել նեյրոակտիվ ամինաթթուներ (գլուտամատ, գամմամինակարազաթթու, ասպարտատ, գլիցին, տաուրին), մոնոամիններ (ադրենալին, նորադրենալին, դոֆամին, սերոտոնին, հիստամին), պոլիամիններ (օրնիտին, պուտրեսցին, կադավերին, սպերմին, սպերմիդին), այդ նյութերի փոխանակության արգասիքներ, ինչպես նաև կատարել փորձ նշված հիվանդություններով տառապող մարդկանց կենսաբանական հեղուկներում հիվանդությունների զարգացման բիոմարկերները որոշելու նպատակով:

Սարքով/սարքավորումով
կատարված/կատարվող աշխատանքները
(հետազոտություններ, օգտվող
գիտաաշխատողների և կազմակերպությունների
թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)

Եռակի քառաբևեռ մասս-սպեկտրոմետրի հետ համակցված հեղուկ քրոմատոգրաֆի (Triple Quadrupole LC/MS/MS) աշխատանքի համար պարտադիր պայման է գերմաքուր ազոտի մշտական հոսքի առկայությունը, որը հնարավոր է ապահովել ազոտի գեներատոր կայանների միջոցով: Այդ նպատակով ընթացիկ տարում ԵՊԲՀ-ն մասս-սպեկտրոմետրի հետ համակցված հեղուկ քրոմատոգրաֆի մատակարարումից (06.02.2020թ.) հետո նախաձեռնել է բարձրարժեք սարքի՝ ազոտի գեներատորի ձեռքբերումը: Չնայած ամբողջ աշխարհում նոր կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած ֆորսմաժորային իրավիճակին և արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված ՀՀ ողջ տարածքում կիրառվող սահմանափակումներին՝ ԵՊԲՀ-ն իրականացրեց ազոտի գեներատոր GENIUS XE35-ի գնման գործընթացը, որը 25.06.2020թ. մատակարարվեց: Հաջորդիվ, ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտորը 29.06.2020թ. դիմել է սարքն արտադրող ընկերության՝ Agilent Technologies-ի Հայաստանյան ներկայացուցիչ «Կոնցեռն-Էներգոմաշ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ խնդրելով համապատասխան մասնագետի միջոցով ապահովել սարքավորման գործարկումը, որին ի պատասխան ստացվել է ընկերության տնօրենի 30.06.2020թ. գրությունն այն մասին, որ սարքի տեղադրման և ուսուցման աշխատանքների իրականացումը հնարավոր է կազմակերպել միայն արտակարգ դրության ավարտից հետո՝ նկատի ունենալով, որ աշխատանքները թողարկող ճարտարագետը ժամանելու է արտերկրից, իսկ արտադրող ընկերության՝ Agilent Technologies-ի կողմից դադարեցվել են գործուղումները: 24.08.2020թ. կրկին գրություն է ուղարկվել «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ մասնագետի հնարավոր այցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան ևս մեկ անգամ ներկայացվել է մասնագետի ժամանման խնդիրը՝ պայմանավորված արտակարգ դրությամբ:

Այս ընթացքում, անկախ արտակարգ դրությամբ պայմանավորված իրավիճակից՝ հետազոտական խումբը, մոդելավորելով առնետների մոտ փորձարարական աուտիզմ, ուղեղի տարբեր կառույցներից պատրաստել է մոտ 300 նմուշ, որոնցում մասս-

սպեկտրոմետրի հետ համակցված հեղուկ քրոմատոգրաֆով պետք է որոշվի պոլիամիններ օրնիտինի, պուտրեսցինի, կադավերինի, սպերմինի, սպերմիդինի սպեկտրը: Հարկ է նշել, որ նմուշները պատրաստվել են հատուկ տեխնոլոգիայով՝ բացառապես սարքով նախատեսվող աշխատանքի համար: Այսպիսով, նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված սահմանափակումների վերացումից հետո համապատասխան մասնագետների կողմից կիրականացվի սպրքավորման աշխատանքի ամբողջական գործարկումը:

ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր՝

(ստորագրություն)

Կոնստանտին Ենկոյան

Տեղեկանք

2019 թ. գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով
 ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված գիտական սարքի/սարքավորման վերաբերյալ

Սարքի/սարքավորման անվանումը	Կենդանիներին գազով անզգայացնելու համակարգ
Գիտական կազմակերպություն	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Համաֆինանսավորող կազմակերպություն	-
Գիտության կոմիտեից ստացված ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)	2500.0 հազար (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ
Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)	1940.0 հազար (մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ
Շահագրգիռ կազմակերպություններ	-
Սարքի/սարքավորման կիրառման ոլորտները	Սարքի կիրառման ոլորտը ներառում է նեյրոգիտության, մասնավորապես՝ աուտիզմի, Ալցհեյմերի հիվանդության և կաթվածի ոլորտում իրականացվող հետազոտական աշխատանքները, որոնք ենթադրում են վիրահատական միջամտություններ լաբորատոր կենդանիների վրա:
Սարքով/սարքավորումով կատարված/կատարվող աշխատանքները (հետազոտություններ, օգտվող գիտաշխատողների և կազմակերպությունների թիվ, հրապարակումներ և այլ տեղեկատվություն)	Կենդանիներին գազով անզգայացնելու համակարգը, որը մատակարարվել է 16.01.2020թ., նախատեսված է կենդանական մոդելների ստացմամբ իրականացվող հետազոտությունների համար: Չնայած նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված ֆորսմաժորային իրավիճակին՝ ԵՊԲՀ հետազոտական խմբերի կողմից համակարգի կիրառմամբ իրականացվել է կաթվածի, աուտիզմի և Ալցհեյմերի հիվանդության դեպքում առաջացող նեյրոնալ տեղաշարժերի ուսումնասիրություն: Կենդանիներին գազով անզգայացնելու համակարգը հնարավորություն է տվել

ստանալ կաթվածի կենդանական մոդել՝ օգտագործելով էնդոթելինի ստերեոտաքսիկ ներարկում:

Սարքի կիրառումը ապահովում է միջազգային էթիկական նորմերին համապատասխան անէսթեզիայի և անալգեզիայի իրականացում վիրահատական միջամտությունների ժամանակ՝ նվազեցնելով կենդանիների մահացածությունը հետազոտությունների ընթացքում: Դրա շնորհիվ զգալիորեն բարձրացել է իրականացվող հետազոտությունների որակը, նվազել են հետվիրահատական բարդություններն ու մահացածությունը: Անէսթեզիայի խորության կարգավորման շնորհիվ հնարավոր է դարձել գերճշգրիտ միջամտությունների իրականացումը:

Նկարներում ներկայացված է տեղադրված սարքը, ինչպես նաև հետազոտողի կողմից սարքի գործարկումն աշխատանքային գործընթացում:

ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր՝



(ստորագրություն)

Կոնստանտին Ենկոյան

ՀՀ գիտության կոմիտեի աջակցությամբ ձեռքբերված սարքավորումների լուսանկարներ

